[illegible]

-[illegible]
- Բնականաբար, ծրագիրը կշարունակվի: Նախկինում այդ հարցով ոչ մի վիճակագրություն չէր տարվում, այդ պատճառով քարտերի հանձնման համար ցուցակների նախապատրաստման գործընթացն անցկացվեց բացթողումներով, ցուցակում բացակայում էին մի շարք գյուղեր: Առաջիկայում մեկնարկային ավելի լավ վիճակի մեջ կլինենք, քանզի արդեն գրեթե լիարժեք տեղեկատվություն ունենք ինչպես ոլորտի վիճակի, այնպես էլ՝ ոլորտում զբաղված մարդկանց, փոքր եւ միջին ֆերմերների մասին: Էլ չեմ խոսում գյուղատնտեսական խոշոր միավորումների մասին: Չեմ բացառում, որ առաջիկայում ծրագրի ձեւաչափը կարող է փոխվել, թեպետ, ընդհանուր առմամբ, ծրագիրը կմնա ուժի մեջ: Բնականաբար, տվյալ պահին դժվար է խոսել ծրագրում իրականացվելիք փոփոխությունների մասին, թեպետ ելնելով նրանից, որ մեր տնօրինության տակ ավելի ստույգ ու սպառիչ տեղեկատվություն ունենք, ուստիեւ հաջորդ ծրագիրը պետք է լինի ավելի արդյունավետ:
-[illegible] «[illegible]»[illegible]
- Ներկա դրությամբ, հիմնադրամում երկու հիմնադիր կազմակերպություններ են, թեպետ նրանց ներդրողներ չի կարելի անվանել, քանզի ներդրող հասկացությունը ինքնին նախատեսում է շահույթի ստացման միտում: Այնպես որ, ներկա դրությամբ մենք կարող ենք խոսել հիմնադրամի ֆինանսավորման եւ ոչ թե ներդրումների իրականացման մասին:
-[illegible]
- Դա «Քարթու» հիմնադրամն է եւ Գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը: Ավելացնեմ՝ դա չի նշանակում, որ նման իրավիճակը չի փոխվի եւ ոչ մեկը չի միանա վերոնշյալ հիմնադրամին: Դրանում ներդրողների ներգրավումը ավելի քան հավանական է:
-[illegible]
- Դա բացառված է: Կոոպերացիան կլինի կամավոր, եւ յուրաքանչյուր մարդ ինքն է որոշելու անդամակցվել, թե ոչ կոոպերատիվին: Օրենքը ոչ մեկին չի պարտադրի:
Ինչ վերաբերում է կոոպերատիվների մասին օրենքի վերակիրարկմանը, ապա օրենքը

ՇԱԼՎԱ ՓԻՓԻԱ . «ՕՐԵՆՔԸ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՊԱՐՏԱԴՐԻ »

նախատեսում է, որ կոոպերատիվում լինելու են սովորական բիզնես հարաբերություններ, եւ բոլոր անդամները կունենան հավասար իրավունքներ, այսինքն՝ օրենքը հավասար իրավունքներ է վերապահում ինչպես 100 հեկտար ունեցող ֆերմերին, այնպես էլ՝ մեկ հեկտարով կոոպերատիվի անդամ դարձած գյուղացուն:
Ավելացնեմ, չնայած օրենքի նախնական տարբերակում նախատեսված էր, որ օտարերկրյա քաղաքացիները կարող են դառնալ կոոպերատիվի անդամ, օրենքի վերջնական տարբերակում այդ կետը հանվել է, եւ օտարերկրացիները նման իրավունքից զրկվել են:
Ավելացնեմ նաեւ, որ կոոպերատիվների համար օրենքով նախատեսվում են հարկային արտոնություններ: Արտոնություններ կշնորհվեն նաեւ այն գրանցված հողամասերին, որոնք հանդիսանում են կոոպերատիվ անդամակցության ներդրումը: Այդ հողերն էլ կօգտվեն հողահարկի 50 տոկոսանոց արտոնությունից:
Օրենքի մյուս մանրամասները պարզելու նպատակով մենք դիմեցինք Վրաստանի խորհրդարանի ագրարային կոմիտեի փոխնախագահ Գիգլա Ագուլաշվիլուն:

- Բատոնո Գիգլա , էլ ինչ արտոնություններ են սահմանվում կոոպերատիվների համար:
- Նշանակալի արտոնություն է այն, որ կոոպերատիվում միավորված անձինք կարող են բանկի հետ հարաբերվել՝ որպես կորպորացիոն հաճախորդ: Բացի այդ, կոոպերատիվի անդամը կարող է օգտագործել նաեւ չգրանցված հողամասը, թեպետ դրա վրա հարկային արտոնություն ստանալու համար այն պետք է անպայման գրանցի: Նախատեսված են նաեւ այլ արտոնություններ:
- Իսկ ինչ է նախատեսում օրինանախագիծը այն դեպքում , եթե կոոպերատիվի անդամը որոշում է դուրս գալ միավորումից:
- Նման դեպքերի համար օրինանախագծում նախատեսվում են մի քանի տարբերակներ, մասնավորապես, գյուղացին կոոպերատիվից կարող է դուրս գալ իր սեփական հողամասով, նույն չափերի այլ հողամասով եւ փոխհատուցմամբ: Թեպետ, այդ հարցը պետք է կարգավորվի կոնկրետ հիմնադրույթներով, քանզի անթույլատրելի է ցանկացած ժամանակ կոոպերատիվից դուրս գալը, քանզի դրանով, հնարավոր է վնաս հասցվի միավորման ընդհանուր շահերին, մյուս անդամներին:
- Ձեր կարծիքով , կոոպերատիվների մասին օրենքի վերակիրարկումը որքանո՞վ է առաջադիմական քայլ եւ որքանո՞վ դա կնպաստի փակուղում հայտնված գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը:
- Ըստ իս, ներկայիս տնտեսական, մեղմ ասած, ոչ դյուրին պայմաններում, կոոպերատիվների հիմնումը գրեթե միակ հնարավորությունն է, որը մարդկանց թույլ կտա առավել արդյունավետորեն օգտագործել ունեցած ռեսուրսները: Դատեք ինքներդ, գյուղացիների մեծ մասը, փոքր եւ միջին ֆերմերները միջոցների սղության պատճառով, ի վիճակի չեն մշակելու իրենց հողամասերը: էլ չեմ խոսում սերմնանյութի, պարարտանյութի, անհրաժեշտ գյուղատնտեսական սարքերի ու գործիքների ձեռքբերման մասին: Ջանքերի համատեղման դեպքում այդ հարցերի լուծումը, չէի ասի, որ օրակարգից կհանվեր, սակայն շատ ավելի դյուրին կդառնար: Դրան ավելացրեք նաեւ պետության կողմից սահմանվող հարկային արտոնությունները: Կարծում եմ, որ տվյալ պարագայում կոոպերատիվ միավորումների ձեւավորումը այն իրատեսական հնարավորությունն է, որն ի վիճակի է գյուղատնտեսությունը դուրս բերել փակուղուց:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

2 / 2